ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ԱՆՎՃԱՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

27.06.2022 18:43

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հայտարարում է Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով նախատեսված աշխատասենյակից՝ 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում **անվճար** օգտվելու համար հայտեր ներկայացնելու ժամանակահատված:

Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են 2022թ-ի հունիսի 27-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ: Հայտերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am էլ. հասցեին, ինչպես նաև կարող են ներկայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Ջաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

Տեղերը սահմանափակ են՝ առկա է ընդամենը 20 աշխատատեղ:

Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանող հավակնորդների հետ կանցկացվի հարցազրույց: Հարցազրույցը կանցկացվի 2022 թվականի հուլիսի 4-ին, ժամը 15:00-ից սկսած՝ հայտատուների հետ նախապես համաձայնեցված ժամին:

Հիշեցում. ՀՀ ՓՊ Երիտասարդական խորհրդի կանոնագրքի համաձայն՝ Երիտասարդ փաստաբան է համարվում (1) ոչ ավել, քան երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը՝ անկախ տարիքից, ինչպես նաև (2) մինչև երեսուն տարեկան փաստաբանը՝ անկախ փաստաբանական ստաժից:

Ծանուցում

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի իրականացումն ուղղված է Երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին աջակցելուն:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից ընտրված փաստաբանները հնարավորություն կստանան իրենց

աշխատանքային գործունեությունն իրականացնել ք. Երևան, Ջաքյան 2, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ հասցեում գտնվող աշխատասենյակում, որը տրամադրվելու է անվճար: Միևնույն ժամանակ, հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով, Աշխատասենյակն օգտագործելու ժամակահատվածում, յուրաքանչյուր Շահառու կիսամյակի ընթացքում պետք է Հանրային պաշտպանի գրասենյակի առաջարկով անվճար իրավաբանական օգնություն տրամադրի քաղաքացիներին՝ ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից հաստատված ընթացակարգով սահմանված կարգով և քանակով:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրից և ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի 21.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Աշխատասենյակից օգտվելու ընթացակարգից:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

երիտասարդական խորհուրդ

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })